ՏԱՐԱԾՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ/ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 01/12-22

ք. Երևան **01 դեկտեմբերի 2022թ.**

«Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ը, (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Մարինա Հակոբյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, միասին հիշատակման դեպքում այսուհետ՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Կատարողը թույլատրում է Պատվիրատուին Հայաստանի ազգային պատկերասրահի (Արամի 1) Հայ հին և միջնադարյան արվեստի երեք ցուցասրահներում (այսուհետ՝ Տարածք) անցկացնել «Մանկական Եվրատեսիլ» երգի 20-րդ մրցույթի մասնակիցների վիճակահանության միջոցառումը (այսուհետ՝ Միջոցառում), ինչպես նաև Պատվիրատուին մատուցել Տարածքի սպասարկման ծառայություններ, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել Տարածքի օգտագործման թույլտվության և Տարածքի սպասարկման ծառայությունների դիմաց:

1.2. Կատարողը հաստատում և հավաստում է, որ.

1.2.1. ունի բոլոր իրավունքներն Պայմանագիրը կնքելու համար,

1.2.2. Պայմանագրի կնքումը չի խախտում երրորդ անձանց շահերը:

1.3. Տարածքի օգտագործման թույլտվությունը տրամադրվում և ծառայությունները Պատվիրատուին մատուցվելու են 2022թ. դեկտեմբերի 02-ին ժամը 13:00-ից մինչև 18:00-ն, դեկտեմբերի 03-ին ժամը 17:00-ից մինչև 24:00-ն, դեկտեմբերի 4-ին ժամը 09:00-ից մինչև 24:00-ն և դեկտեմբերի 05-ին ժամը 10:00-ից մինչև 23:00-ն:

1.4. Միջոցառման անցկացման ժամկետն է՝ 2022թ. դեկտեմբերի 05-ին ժամը 10:00-ից մինչև 23:00-ն, գույքի/տեխնիկայի տեղակայման ժամկետն է՝ 2022թ. դեկտեմբերի 02-ին ժամը 13:00-ից մինչև 18:00-ն, դեկտեմբերի 03-ին ժամը 11:00-ից մինչև 18:00-ն, դեկտեմբերի 4-ին ժամը 11:00-ից մինչև 20:00-ն , գույքի/տեխնիկայի Տարածքից դուրս բերման ժամկետն է՝ 2022թ. դեկտեմբերի 06-ին մինչև ժամը 13:00-ն:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Կատարողը պարտավորվում է՝

2.1.1 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետներում թույլատրել Պատվիրատուին մուտք գործել Տարածք՝ վերջինիս գույքի/տեխնիկայի տեղակայման և Միջոցառման կազմակերպման նպատակով.

2.1.2 Ապահովել տրամադրված Տարածքի անվտանգությունը, պահպանությունը, Տարածքի ընդհանուր գույքի սպասարկումը, Տարածքի անխափան էլեկտրաէներգիայի սնուցումը, մաքրությունը և լուսավորությունը, տեխնիկական սպասարկման և կազմակերպչական անձնակազմի և հսկիչների (անվտանգությունն ապահովող անձնակազմի) ներկայության ապահովումը.

2.1.3 Միջոցառման կազմակերպման նպատակով թույլատրել Պատվիրատուի ներկայացուցիչներին մուտք գործել տեղակայված Տարածք, թույլատրել օգտվել տեխնիկական մուտքերից.

2.1.4 Եթե Կատարողը հարգելի պատճառներով չի կարողանալու սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում, կարգով կամ ծավալով մատուցել համապատասխան ծառայությունները, ապա նա պարտավոր է այդ մասին ոչ ուշ քան 3 /երեք/ օր առաջ հայտնել Պատվիրատուին:

2.2 Կատարողն իրավունք ունի՝

2.2.1 Պահանջել Պատվիրատուից օգտագործել Միջոցառման անցկացման համար հատկացված Տարածքը դրա նպատակային նշանակությանը համապատասխան.

2.2.2 Տարածքի օգտագործման թույլտվության և Ծառայությունները մատուցելու դիմաց Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 3.2. կետում նշված գինը.

2.2.3 Արգելել Կատարողի տարածք մուտք գործել ոչ սթափ վիճակում գտնվող անձանց: Որոշ տարափոխանցվող հիվանդությունների, համաճարակի դեպքում Կատարողի տարածքում գտնվող անձանց առողջության պահպանման նպատակով Կատարողն իրավունք ունի պահանջել տարածք մուտք գործել անվտանգության կանոնների պահպանման դեպքում.

2.2.4 Կատարողի տարածքից դուրս հրավիրել այն անձանց, որոնք խախտել են ՀՀ օրենսդրության, Կատարողի ներքին իրավական ակտերի պահանջները կամ խախտել են հասարակական կարգը կամ համակեցության կանոնները կամ սույն պայմանագրի պահանջները:

2.2.5 Կատարողի տարածքում անվտանգության նպատակով Կատարողն իրավունքի ունի իր տարածքի ընդհանուր օգտագործման մասերում՝ դահլիճներ, միջանցքներ, աստիճանավանդակներ, պահեստային մասեր, իրականացնել տեսանկարահանումներ, ձայնագրումներ, լուսանկարահանումներ, որոնք կարող են օգտագործվել միայն օրենքով նախատեսված դեպքերում, ինչպես նաև Կատարողի ծառայությունների գովազդման նպատակով:

2.2.3 Վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը՝ այդ մասին 1 /մեկ/ օր առաջ գրավոր ծանուցելով Պատվիրատուին:

2.3 Պատվիրատուն պարտավորվում է՝

2.3.1 Տարածքի օգտագործման և ծառայությունների մատուցման դիմաց վճարել սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված կարգին համապատասխան.

2.3.2 Օգտագործել Միջոցառման անցկացման նպատակով հատկացված Տարածքը դրա նպատակային նշանակությանը համապատասխան.

2.3.3 Հատկացված Տարածքում առանց Կատարողի գրավոր համաձայնության չկատարել վերակառուցման կամ այլ տիպի շինարարական աշխատանքներ, ինչպես նաև չտեղակայել այնպիսի սարքավորումներ, որոնք կարող են խաթարել սրահի ցուցանմուշների պահպանվածությունը.

2.3.4 Չվնասել Կատարողին պատկանող գույքը.

2.3.5 Պայմանագրի 1.4 կետում նշված ժամկետներում Տարածքից դուրս բերել իր գույքը:

2.3.6 Հատկացված Տարածքում և առհասարակ Հայաստանի ազգային պատկերասրահում չծխել, մոմ կամ այլ նյութեր չվառել: Պատվիրատուն պարտավորվում է սույն պարտադիր պայմանի մասին տեղյակ պահել իր հյուրերին և մնում է պատասխանատու նրանց արարքների համար Կատարողի առջև.

2.3.7 Ապահովել, որ իր ներկայացուցիչների, Միջոցառման կազմակերիչների ու հյուրերի կողմից պահպանվեն ՀՀ օրենսդրության, հրդեհային անվտանգության,

սանիտարահիգիենիկ, համակեցության կանոնները, Կատարողի տարածքում գտնվելու Կատարողի ներքին իրավական ակտերի կանոնները, ինչպես նաև սույն պայմանագրով նրանց համար նախատեսված պահանջները.

2.3.8 Մատուցվելիք ծառայություններում նախատեսվող փոփոխությունների կամ սույն պայմանագրի կատարումից հրաժարվելու կամ սույն պայմանագիրը լուծելու մասին ոչ ուշ քան Ծառայությունները մատուցելու օրվանից՝ առնվազն 1 /մեկ/ օր առաջ գրավոր կամ բանավոր հայտնել Կատարողին:

2.4. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.4.1 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամանակահատվածում գտնվել Տարածքում՝ իրականացնելով Միջոցառման կազմակերպման նախապատրաստական աշխատանքներ.

2.4.2 Տարածքում կազմակերպել ֆուրշետ և այլ միջոցառումներ պահպանելով Կատարողի վայրում հաստատված կամ տարածված կանոնակարգը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Սույն պայմանագրով սահմանված Տարածքի օգտագործման թույլտվության տրամադրման և ծառայությունների մատուցման գինը կազմում է 2 000 000 /երկու միլիոն/ ՀՀ դրամ՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բոլոր հարկերը:

3.2 Հաշվի առնելով Միջոցառման կարևորությունը և Պատվիրատուի խնդրանքը, սույն պայմանագրի 3.1 կետում նշված գումարի նկատմամբ Կատարում է 70 տոկոս զեղչ, որի արդյունքում Պատվիրատուն Կատարողին Տարածքի օգտագործման թույլտվության տրամադրման և ծառայությունների մատուցման համար պետք է վճարի 620 000 /վեց հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բոլոր հարկերը:

3.3 Ծառայությունները մատուցելուց հետո Կողմերի միջև կնքվելու է հանձման-ընդունման ակտ և արձանագրություն, ինչպես նաև Կատարողի դուրս է գրվելու հարկային հաշիվ:

3.4. Պատվիրատուն մատուցված Ծառայությունների դիմաց 3.2. կետում նշված գումարը վճարում է Կատարողին հանձնման–ընդունման ակտի/արձանագրության և հարկային հաշվի երկկողմանի ստորագրվելուց հետո 5 աշխատանքային օրերի ընթացքում:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Սույն պայմանագրով սահմանված ժամկետում Տարածքը Պատվիրատուին չտրամադրելու, ծառայությունները չմատուցելու կամ ոչ պատշաճ մատուցելու դեպքում Կատարողը Պատվիրատուին, վերջինիս գրավոր պահանջի դեպքում, վճարում է տուգանք սույն պայմանագրի գնի 5 /հինգ/ տոկոսի չափով:

4.2 Պատվիրատուն պատասխանատվություն է կրում իր հյուրերի կողմից Տարածքի վնասվածքի և/կամ Տարածքում գտնվող գույքի կորստի և/կամ վնասվածքի համար:

4.3 Տարածքի օգտագործման թույլտվության և ծառայությունների մատուցման դիմաց սույն Պայմանագրով սահմանված վճարման ժամկետը խախտելու համար՝ Պատվիրատուն Կատարողին վճարում է տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար սույն պայմանագրի գնի 0,05%-ի չափով:

4.4 Սույն պայմանագրի 2.3.7 կետով նախատեսված պարտադիր պայմանի խախտման դեպքում կամ խախտման հետևանքով Կատարողին կամ նրա գույքին պատճառված վնասը ենթակա է հատուցման Պատվիրատուի կողմից ամբողջ ծավալով:

4.5 Տուժանքի վճարումը Կողմերին չի ազատում սույն պայմանագրով իրենց ստանձնած պարտավորությունները Կատարելու և խախտումները վերացնելու պատասխանատվությունից:
4.6 Կողմերը սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման այլ դեպքերի համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված դատական կարգով:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից: Հանձնման-ընդունման արձանագրությունը կազմում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:
6.2. Սույն պայմանագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
6.3. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև սույն պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը կամ մինչև պարտավորությունների պատշաճ կատարումը:
6.4. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Պատվիրատու՝
«Հայաստանի հանրային
հեռուստաընկերություն» ՓԲԸ
Պետական գրանցման համար՝ 273.120.03023
ՀՎՀՀ՝ 01540062
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0011, Գ. Հովսեփյան 26
Հաշվեհամար՝ 2050022082671001
Բանկ՝ Ինեկոբանկ ՓԲԸ

Գործադիր տնօրեն՝
Հովհաննես Մովսիսյան

Կատարող՝
«Հայաստանի ազգային պատկերասրահ»
ՊՈԱԿ
ՀՎՀՀ 02506317
Թիվ 1ՏԳԲ
Հ/Հ 900018001421
Հասցե՝ ք.Երևան, Արամի 1
E-mail: info@gallery.am

Տնօրեն՝ Ս.Հակոբյան